ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ապրել ու մարտնչել աշխատավոր մարդկության ազատագրման ու երջանկության համար, ահա այն գերագույն նպատակը, որին անմնացորդ նվիրվեց Սուրեն Սպանդարյանը՝ հանրահռչակ «ընկեր Տիմոֆեյը», ինչպես սովորաբար նրան կոչում էին կուսակցական շրջաններում ու բանվորական լայն մասսաների մեջ։ Նա պատկանում է հայ ժողովրդի այն արժանավոր զավակների թվին, որոնք մկրտվեցին համառուսաստանյան հեղափոխական շարժման ավազանում և դարձան համակուսակցական մասշտաբի խոշոր գործիչներ։ Սուրեն Սպանդարյանը լենինյան դպրոցի պրոֆեսիոնալ հեղափոխական էր, կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ, մեծատաղանդ ժուռնալիստ-հրապարակախոս, գրաքննադատ ու արվեստագետ։

Սուրեն Սպանդարյանը ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 15-ին (հին տոմարով դեկտեմբերի 3-ին) Թիֆլիսում՝ մտավորականի ընտանիքում։ Նրա հայրը՝ Սպանդար Ամիրջանի Սպանդարյանը, 1872 թ. ավարտում է Լայպցիգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ դոկտորական աստիճանով։ Այնուհետև նա հաստատվում է Թիֆլիսում, ուր սկզբում աշխատակցում է լիբերալ «Մշակին», բայց շուտով ընդհարվում է նրա խմբագիր Գր. Արծրունու հետ և հարում ազգային կղերապահպանողական ուղղությանը՝ դառնալով նրա պարագլուխներից մեկը։ Բազմակողմանիորեն զարգացած այդ մարդը 1883 թ. հրատարակում է սեփական՝ «Նոր-Դար» թերթը։ Սպանդար Սպանդարյանը, ճիշտ է, քննադատում է ցարիզմի մեծապետական շովինիզմի քաղաքականությունը և հայկական բուրժուական լիբերալիզմը, բայց այդ ամենին նա հակադրում էր հնամենի ու նահապետական «հայկական ապրելակերպը», վաղեմի կենցաղային բարքերը, եկեղեցին ու կղերականությունը։ Նա ենթադրում էր, որ միայն այդ ձևով կարելի է պահպանել «հայոց ոգին ու նկարագիրը»։ Այդուհանդերձ «Նոր-Դարում» մեծ տեղ էր հատկացվում համաշխարհային քաղաքակրթության արժեքների գնահատմանը, հատկապես ռուսական մշակույթին, նրա կարկառուն ներկայացուցիչների (գրողների ու գիտնականների) ծառայությունների լուսաբանմանը։ Բնորոշ է նաև, որ թերթին աշխատակցում էին հայ դեմոկրատ գրողներ Պռոշյանը, Մուրացանը, Շատուրյանը և ուրիշներ։

Սուրենը վաղ սովորեց գրաճանաչություն, այդ թվում հայերեն։ Նա ցուցաբերում էր վառ հետաքրքրասիրություն դեպի շրջապատը։ Դրան նպաստեցին ժամանակի հանգամանքները, մասնավորապես հոր թերթի խմբագրությունը, որը գտնվում էր իրենց բնակարանին կից սենյակում, ուր լինում էին աշքի ընկնող մտավորականներ, հայ անվանի գրողներ, թղթակիցներ։ Սուրենի ուշադրության շրջանակներն ավելի են ընդլայնվում, երբ նա 1894 թ. ընդունվում է Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան։ Նա համակվում է ուսմամբ, բայց և ուշի-ուշով հետևում հարափոփոխ կյանքին։ Սպանդարյանի գիմնազիական տարիները համընկան Ռուսաստանում ազատագրական շարժման պրոլետարական էտապի հետ, երբ Վ. Ի. Լենինը տիտանական պայքար ծավալեց մարքսիստական կուսակցության ստեղծման համար։ Համայն Ռուսիայում լայն թափ ստացավ բանվորական ու սոցիալ-դեմոկրատական շարժումը և այն իր շրջագծի մեջ առավ նաև Անդրկովկասը։ Բանվորական, մարքսիստական խմբակներ և սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ առաջացան երկրամասի խոշոր քաղաքներում, այդ թվում Թիֆլիսում, ուր հեղա-

փոխական զարթոնք էր ապրում սովորող երիտասարդությունը։ Նրա առաջամարտիկներից էր Սուրեն Սպանդարյանը։ Գիմնազիստ Սուրենն անմիջապես աչքի ընկավ թե՛ իր գիտելիքներով և թե՛ հասարակական ակտիվությամբ։

Զննախույզ Սպանդարյանը սեփական աչքերով տեսնում էր հարուստների ցոփ կյանքը և աղքատների դառնությունները, հղփացած վաճառականներին ու չարքաշ մշակներին։ Նյութական զրկանքները մեծ էին հենց իրենց ընտանիքում, հայրը թերթ էր հրատարակում մեծ զոհողությունների գնով, մի կերպ հայթայթում երեխաների ապրուստը, դատում հանապազօրյա հացը։ Հետաքրքրասեր Սուրենը պատասխան էր որոնում կյանքի հարուցած հարցերին։ Այդպիսին նա ձգտում էր գտնել գրքերում և հափշտակված էր ընթերցանությամբ։ Սպանդարյանի վրա հատկապես մեծ ազդեցություն ունեցան ռուս հեղափոխական-դեմոկրատների՝ Գերցենի, Բելինսկու, Չեռնիշևսկու, Դոբրոլյուբովի աշխատությունները, նրանց ազատասիրական գաղափարները, մարտական կոչերը։ Դրանք պարարտացրին հողը՝ ենթադրելու դեպի մարքսիզմը։ Գիմնազիայի վերջին դասարաններում Սպանդարյանը կարդում էր Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի աշխատությունները, անլեգալ գրականություն։

Սպանդարյանն ընդգրկվում է գիմնազիայի մարքսիստական անլեգալ խմբակի մեջ և մասնակցում Թիֆլիսի երիտասարդության հեղափոխական շարժումներին։ Նա շփվում է ռուս, հայ, վրացի սոցիալ-դեմոկրատների հետ. մոտիկից ծանոթանում բանվորական շարժմանը։ Սպանդարյանն անսայթաք գնում էր դեպի մարքսիզմ և աստիճանաբար ձևավորվում որպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատ։ Ճիշտ է նշել հնագույն կոմունիստ, Սպանդարյանին մոտիկից անձամբ ճանաչող ու նրա հետ աշխատող Ռ. Պ. Քաթանյանը, որ «նա երիտասարդական տարիներից մտածում ու գործում էր որպես պրոլետարական հեղափոխական»[1]։ Արդեն 1901 թ. Սպանդարյանը մտնում է Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ և ծավալում եռանդուն գործունեություն։

Նա իր մատերիալիստական ու ինտերնացիոնալիստական աշխարհայացքով լիովին հակադրվում է հայ բուրժուազգայնական և կղերապահպանողական միջավայրին, գաղափարապես բախվում նաև հոր հետ։ Այդ առթիվ նշանավոր գրող Նար-Դոսը, որը ժամանակին աշխատել է որպես «Նոր-Դարի» քարտուղար և մոտ էր կանգնած Սպանդարյանների ընտանիքին, գրել է. «Սպանդար և Սուրեն Սպանդարյաններ։ Հայր և որդի— երկու անտիպոդ, երկու հակառակ բևեռ, երկու տարամերժ անձնավորություն, մեկը մյուսին ժխտող։ Մեկը թունդ ազգայնական, մյուսը՝ մոլեռանդ միջազգայնական։ Հայրը՝ որդու, որդին՝ հոր դեմ...»[2]։ Իհարկե, դա չի նշանակում, թե Սուրենը հորն ոչ-բացող զավակ էր. ամենևին ոչ։ Նա մինչև վերջն էլ պահպանեց իր որդիական սերը նրա նկատմամբ, բայց դեռ դիմնազիական նստարանից գաղափարապես ու քաղաքականորեն հակադրվեց նրան, խստորեն դատապարտեց «Նոր-Դարի» գովքը հայ բուրժուազիային ու կղերականությանը։

Ստեփան Շահումյանի ու Բոդդան Կնունյանցի հետ միասին Սուրեն Սպանդարյանը պաշտպանում է հայ լենինյանների ավագագույն սերնդին, որը թրծվեց համառուսաստանյան հեղափոխական շարժման քուրայում և, ոգեշնչված մարքսիզմի ուսմունքով, դուրս եկավ ազգային նեղ շրջանակներից ու գործեց միջազգայնության դիրքերից՝ բոլոր աշխատավորների միասնական պայքարի կազմակերպման նշանաբանով. «Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի, միջավայրի ծնունդ էր... Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչները եղել են՝ Չեռնիշևսկի, Բելինսկի, Պլեխանով և ապա՝ Մարքս, Էնգելս»[3]։

---

1 ՍՄԿԿ ԿԿ-ին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի Հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (ՄԼԻ ՀՄԿԱ). ֆ. 4006, ց. 1, գ. 980, թ. 1։

2 Ն ա ր-Դ ո ս. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1970, էջ 285։

3 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, Երևան, 1978. էջ 60։

Սպանդարյանի կյանքում նշանակալից էր 1902 թ.։ Հունիսին նա ավարտում է գիմնազիան և նախապատրաստվում շարունակելու ուսումը։ Բայց մինչ այդ ամուսնանում է իր սիրելի Օլգայի հետ (Օլգա Վյաչեսլավովնա Ադամովիչ, հետո Սպանդարյան), որը դառնում է նրա կյանքի ընկերն ու հեղափոխական պայքարի մարտական զինակիցը։ Նրանք ունենում են չորս երեխաներ՝ Մանյա (Մարի), Էիլյա (Անժելիկա), Ստյոպա (Ստեփան), Նյուկա (Սերգեյ), որոնք դառնում են իրենց ծնողների արժանավոր զավակները, սոցիալիզմի ակտիվ կառուցողներ։

1902 թ. Սպանդարյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, իսկ հաջորդ տարում փոխադրվում իրավաբանական ֆակուլտետ, որի հասարակագիտական ընդգրկումն ավելի մեծ էր։ Նա լսում է ականավոր գիտնական-դասախոսների, բայց ավելի շատ հափշտակվում անլեգալ մարքսիստական գրականության ուսումնասիրությամբ։ Սպանդարյանն անմիջապես կապվում է համալսարանի ու քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ և իրեն դրսևորում որպես եռանդուն կուսակցական աշխատող, ագիտատոր, պրոպագանդիստ ու կազմակերպիչ։

Սպանդարյանի համար ուղեցույց էին Վ. Ի. Լենինի աշխատությունները, որոնք նա ուսումնասիրում էր «Իսկրայի» միջոցով կամ առանձին հրատարակություններով։ Նրա վրա հատկապես մեծ ազդեցություն գործեց «Ի՞նչ անել» գիրքը։ ՌՍԴԲԿ II համագումարից հետո նա անվերապահորեն կանգնեց բոլշևիկների կողմը և վճռական պայքար մղեց մենշևիկների դեմ։ Սպանդարյանը, Մոսկվայի կուսակցական կոմիտեի հանձնարարությամբ, պրոպագանդիստական ու կազմակերպական աշխատանք էր տանում Պրեսնյայում, «Դուկատ» ծխախոտի ֆաբրիկայի բանվորների մեջ, պարզաբանում նրանց ծանր դրության պատճառները և մղում հեղափոխական պայքարի։

Սպանդարյանը Մոսկվայում սովորում ու գործում էր նյութական սուղ պայմաններում։ Հայրը նրան ուսման ուղարկեց նյութական զրկանքների գնով, որովհետև միջոցներ չուներ և հազիվ էր ծայրը ծայրին հասցնում։ Ուստի, նա ի վիճակի չէր հետո էլ բավարար չափով դրամ ուղարկելու և Սուրենը Մոսկվայում ապրում էր կիսաքաղց վիճակում, մաշված հագուստով։ 1904 թ. նոյեմբերի 28-ին նա հորը հայտնում է, որ ուսանողներին օգնող ընկերությունը վճարել է իր համալսարանական վարձը և շեշտում. «Շատ շնորհակալություն ռուս հասարակությանը և ռուս ինտելիգենցիային, որոնք ինձ օգնեցին և ինձ պաշտպանեցին»[4]։ Սպանդարյանի գրությունն ավելի վատացավ, երբ նրա հայրը հակացարական ելույթի համար (հայկական եկեղեցական գույքերի բռնագրավման կապակցությամբ) 1904 թ. ձերբակալվեց և ապա արտաքսվեց Կովկասից, իսկ «Նոր-Դարն» էլ միառժամանակ փակվեց։ Սպանդարյանների ընտանիքը խոր ապրումների մեջ էր։ Բայց Սուրենն իր մեջ ուժ գտավ դիմակայելու դժվարություններին։ Նա չընկճվեց կենցաղային հոգսերի ծանր բեռան տակ և շարունակեց թե՛ ուսումը և թե՛, առավել ևս, հեղափոխական գործունեությունը։

1904 թ. դեկտեմբերի 5—6-ը Մոսկվայի փողոցները լի էին ցուցարար ուսանողներով, որոնք շարժվում էին կարմիր դրոշներով ու հեղափոխական երգերով։ Առաջամարտիկների մեջ էր Ս. Սպանդարյանը և իր եռանդուն ջանքերով ոգևորում էր ընկերներին։ Չնայած ցույցի խաղաղ բնույթին, ցարական իշխանությունները ուսանողների դեմ հանեցին զորք ու ոստիկանություն։ Տեղի ունեցան արյունահեղ մարտեր, որի ընթացքում եղան զոհեր ու վիրավորներ։ Սպանդարյանը 1904 թ. դեկտեմբերին հորը գրած նամակում այդ առթիվ նշում է, որ պաշտոնական թերթերում տպագրվում են ամեն կարգի զրպարտություններ, որոնց չպետք է հավատել. «Դուք երևի արդեն կարդացած կլինեք Մոսկվայի դեմոնստրացիայի մասին։ Բոլորը սուտ է, անամոթ սուտ։ Դա ահռելի բան էր, գրանդիոզ։ Ցավալին այն է, որ մի քանի ուսանող և ուսանողուհի սպանված են։ Շատերը վիրավորված, կան և անդամալույծներ։ Կառավարության վախը այն աստիճանի էր հասել, որ թնդանոթներ էր բերել, պոլիցիայի և կազակների գազանության չափը անցել էր։ Դեմոնստրացիան միաժամանակ կատարվեց Тверской, Кузнецкий, Дмитровка, Лубянка, Воздвиженка, Арбат, Никитинская փողոցներում։ Չեմ թաքցնի, որ ես մասնակցեցի, բայց հաջողաբար անվնաս դուրս պրծա, թեպետ գլխարկս մնաց պատերազմի դաշտում և ստացա մի քիչ ծեծ, թեպետ ճշմարտությունը պահպանելու համար պիտի ասեմ, որ ինքս էլ իմ կոմբալով լավ ջարդեցի պոլիցիայի գլուխները և մեջքերը։ Համալսարանում забастовка է»[5]։

Սպանդարյանը Մոսկվայում ոչ միայն խորացրեց իր մարքսիստական պատրաստականությունը, այլև ծավալեց եռանդուն պրակտիկ գործունեություն, ընդլայնեց իր ինտերնացիոնալ կապերը, ստացավ հեղափոխական պայ-

---

[4] Ս. Սպանդարյան. Երկեր. հ. 2, էջ 285։

[5] Նույն տեղում, էջ 286—287։

քարի մկրտություն, կոփվեց քաղաքականապես ու կազմակերպչորեն։ Նա ձևավորվեց որպես պրոֆեսիոնալ հեղափոխական և խոր գիտելիքների ու հուժկու կարողությունների սպառազինությամբ թևակոխեց նշանավոր 1905 թ.։

Համալսարանի փակվելու պատճառով Սպանդարյանը չէր սովորում և ամբողջովին համակված էր հեղափոխական գործունեությամբ։ Նա 1905 թ. ապրիլին մեկնում է Գերմանիա, ուր լինում է Բեռլինում, Մյունխենում և ապա՝ Հայդելբերգում։ Այդտեղ էր ապրում Սպանդարյանների ընտանիքի հետ հարազատորեն կապված և «Նոր-Դարի» թղթակից Ոսկի Տեր-Հովհաննիսյանը՝ հայ նշանավոր գրող Մուրացանի կինը։ Նա ժամանակի կրթված կանանցից էր, հակված դեպի սոցիալ-դեմոկրատական շարժումը և ակտիվորեն մասնակցում էր հասարակական իրադարձություններին, մասնավորապես կանանց ազատագրման շարժմանը։ Սպանդարյանի համար հաճելի ու հետաքրքիր էր նման անձնավորության հետ առնչվելը, միաժամանակ ունենալով իր սեփական ներգործությունը նրա ու նրանց ընտանիքի վրա։ Նա հաճախում էր Հայդելբերգի հռչակավոր համալսարանը, լսում դասախոսություններ, սովորում գերմաներեն։ Միաժամանակ կապվեց տարագիր բոլշևիկների հետ, նրանց հաղորդում արեց Մոսկվայի կազմակերպության աշխատանքների մասին, ծանոթացավ կուսակցության արտասահմանյան խմբերի գործունեությանը և ինքը կատարեց որոշ հանձնարարություններ։ Սպանդարյանը մոտիկից շփվեց Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիայի գործունեության հետ։

1905 թ. մայիսի 26-ին նա Հայդելբերգից մեկնում է Ռուսաստան և, հաղթահարելով բազմապիսի դժվարություններ ու վտանգներ, հասնում Թիֆլիս։ Այժմ նա գտնվում էր իր ընտանիքի, հարազատների շրջապատում և զբաղվում նրանց հոգսերով, որպիսիք շատ էին։ Սպանդարյանն անմիջապես կապվում է ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի հետ, որի կազմում ծավալում է եռանդուն գործունեություն։ Ցարական լրտեսները կրնկակոխ հետևում էին նրան և շուտով «Մոսկվայի ուսանողը», «Օվրաժնի» անվան տակ, գաղտնի հսկողության վերցվեց Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի կողմից։ Չնայած դրան, Սպանդարյանը հոկտեմբերյան համառուսական քաղաքական գործադուլի օրերին Թիֆլիսում մասնակցեց բանվորական ցույցերին։

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի գիտությամբ 1905-ի հոկտեմբերի վերջին Սպանդարյանը մեկնեց Մոսկվա՝ «շարունակելու ուսումը համալսարանում»։ Նա մայրաքաղաքը գտավ հեղափոխական եռուզեռի մեջ։ Երկրում հեղափոխության վերելքը բարձրանում էր նոր աստիճանի և օրակարգի հարց դարձավ զինված ապստամբությունը։ Ուշադրության կենտրոնում էր Մոսկվան, ուր բոլշևիկները դեկտեմբերի 7-ին կազմակերպեցին բանվորների ընդհանուր քաղաքական գործադուլ, որը վերաճեց զինված ապստամբության։ Մարտերն ուժեղ էին հատկապես Պրեսնյայում (այժմ՝ Կրասնայա Պրեսնյա), ուր բանվորների հետ բարիկադների վրա կռվում էր նաև Սուրեն Սպանդարյանը։ Ինն օր անընդհատ Մոսկվայի ապստամբները՝ բոլշևիկների ղեկավարությամբ, մարտնչում էին հերոսաբար, մինչև որ անհավասար կռվում նրանք հարկադրված էին դադարեցնել պայքարը։

Չնայած պարտությանը, Մոսկվայի ապստամբությունը, որը դարձավ ռուսական առաջին հեղափոխության գագաթնակետը, կարևորագույն նշանակություն ունեցավ հետագա պայքարի կազմակերպման համար։ Սուրեն Սպանդարյանը այդ հերոսական ելույթի ակտիվ կազմակերպիչներից էր։ Նա միայն պատահականորեն փրկվեց և վերջին պահին՝ մի խումբ ընկերների հետ կարողացավ դուրս գալ ցարական զորքերով շրջապատված Պրեսնյայից։ Ի դեպ, մարտերից մեկի ժամանակ զոհվեց նրա բանվոր-ընկեր Տիմոֆեյը, որի անունը այնուհետև նա դարձրեց իր հեղափոխական-կուսակցական մականունը։ Ցարական կառավարությունը հաշվեհարդար տեսավ ապստամբության կազմակերպիչների ու ակտիվիստների հետ։ Շատերը ձերբակալվեցին, աքսորվեցին, մահապատժի ենթարկվեցին։ Սպանդարյանի վերաբերյալ ոստիկանությունը կոնկրետ հանցանշաններ չուներ, որպեսզի նրան խստորեն պատժել։

Այդուհանդերձ նա հեղափոխական աշխատանքի համար վտարվեց Մոսկվայի համալսարանի 3-րդ կուրսից (պատրվակը ուսման վարձ չմուծելն էր)։

Սպանդարյանը, գոտեպնդված տեսական մարքսիզմով ու հեղափոխական պրակտիկայով, 1906 թ. սկզբներին վերադառնում է Թիֆլիս։ Նա՝ «ընկեր Տիմոֆեյը», ամբողջովին մխրճվում է հեղափոխական գործունեության մեջ և ձեռք բերում համընդհանուր ճանաչում, որպես խորապես պատրաստված ու բազմակողմանի զարգացած, սկզբունքային ու անհողդողդ կամքի տեր, քաղաքական ու կազմակերպական աշխատանքի բարձր ձիրք ունեցող, աշխատավոր մասսաներին հասկացող ու լայն ժողովրդականություն վայելող կուսակցական գործիչ, տաղանդավոր հրապարակախոս ու հռետոր։

Անդրկովկասի բազմազգ բնակչության աշխատավոր զանգվածների հեղափոխական համախմբման գործում կարևոր նշանակություն ուներ մայրենի լեզվով բոլշևիկյան մամուլի ստեղծումը։ Շուտով Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի ու Ս. Կասյանի խմբագրությամբ լույս են տեսնում «Կայծ» ու «Նոր խոսք» հայերեն բոլշևիկյան թերթերը, որոնց էջերում պրոպագանդվում է լենինյան ստրատեգիական ու տակտիկական գիծը։ Ս. Սպանդարյանը գրում է բազմաթիվ հոդվածներ, որոնց մեջ լիովին պաշտպանում է բոլշևիկների քաղաքական դիրքորոշումը և մերկացնում մենշևիկներին, էսէռներին, դաշնակցականներին, «սպեցիֆիկներին»։ Նա ցարիզմը բնութագրում է որպես «ֆեոդալիզմի ու բուրժուազիայի... հակաբնական կենակցություն, կոնկուբինաս», որի գլուխ է կանգնած «մեծ մարդասպան Նիկոլայ Ռոմանովը»։ Բանվորները, գյուղացիները, ճնշված ժողովուրդներն ատելությամբ են լցված դեպի ցարիզմը և պետք է համախմբված պայքարել նրա դեմ։ «Գիտակից բանվորի սրտում,— գրել է Ս. Սպանդարյանը,— պետք է է՛լ ավելի ուժեղանա զզվանքն ու ատելությունը դեպի այդ հրեշավոր, գարշելի և արյունոտ ցարիզմը։ Մեր մեջ պետք է է՛լ ավելի ամրապնդվի նրա դեմ կռվելու, այն տապալելու անհողդողդ վճռականությունը»[6]։

Սպանդարյանը հիմնավորում ու լուսաբանում է բուրժուադեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի և բանվորագյուղացիական դաշինքի գաղափարները։ Ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական պայքարի առաջամարտիկն է պրոլետարիատը, որին Սպանդարյանն անվանում է շահագործողական կարգերի «գերեզմանափորը», «ժողովրդի ազատության գործում անձնազոհ մարտնչող», «առաջավոր ռազմիկ», «ազատության անվեհեր ռազմիկ»։ Նա ուղղակի գրում է, որ հեղափոխության մեջ «կռվի հեգեմոնիան պատկանում է գիտակից պրոլետարիատին», իսկ նրա բնական դաշնակիցն է գյուղացիությունը։ «Խորհրդավոր լռություն» հոդվածում նա շեշտում է, որ «այս կռվում բանվոր դասակարգը և գյուղացիությունը ձեռք-ձեռքի տված, միացյալ ուժով պիտի առաջ խաղան»[7]։ Սպանդարյանը գործում էր լենինյան սպառազինությամբ և նրա հարվածները թշնամիներին խիստ հատու էին։ Մենշևիկները զայրույթով էին նշում. «Եթե քրքրես Տիմոֆեյի խելքը, այնտեղ կըգտնես միայն Լենինին»[8]։

Հեղափոխության համար խիստ վտանգավոր էին բուրժուական նացիոնալիստները, որոնք դասակարգային պայքարը նենդափոխում էին ազգամիջյան կռիվներով և կազմալուծում բոլոր աշխատավորների համատեղ պայքարը, ընդդիմանում նրանց ինտերնացիոնալ միասնության ստեղծմանը։ Սպանդարյանը խարազանում է ինչպես մեծապետական շովինիզմը, ցարիզմի վարած բռնի ռուսացման քաղաքականությունը, այնպես էլ տեղական նացիոնալիզմը։ Հայ իրականության մեջ ռեակցիոն դեր են կատարում հատկապես դաշնակցականները, որոնք, սպեկուլյացիայի ենթարկելով արևմտահայերի ազատագրման գաղափարը, աշխատավոր մասսաներին հեռացնում էին հեղափոխական շարժումից։ Ավելին, նրանք թեև հագան «սոցիալիստական» դիմակ, բայց

---

6 Նույն տեղում, էջ 150։

7 Նույն տեղում, հ. 1, էջ 92։

8 ՄԼԻ ՀՄԿԱ. ֆ. 4006, ց. 1, գ. 946, թ. 1։

պայքարում էին բանվորների ու գյուղացիների հեղափոխական ելույթների դեմ, ճնշում գործադուլները, գյուղերում ստեղծում իրենց «ոստիկանությունն» ու «պատժարարները»։ Սպանդարյանը վճռականորեն մերկացնում է դաշնակներին, որպես «հայ կյանքի ցեցերի», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը թթացնողների», «հայ գյուղացիությանն ամենաանամոթ կերպով հարբստահարողների ու կեղեքողների»։ Բացի դրանից նրանք թշնամություն են սերմանում ադրբեջանցի ու այլ ազգությունների աշխատավորների նկատմամբ։ «Սոցիալիստ դաշնակցությունը և թուրք բանվորները» հոդվածում Սպանդարյանը նշում է, որ «սոցիալիստական «դաշնակցությունը» ամեն կերպ աշխատում է անջատել հայ բանվորությանը ուրիշ ազգերի պրոլետարիատից և, օգտվելով այդ բաժանումից, շահագործել այդ մասսան իր բուրժուական նպատակների համար»[9]։

Սպանդարյանը ոչ միայն պրոպագանդում էր լենինյան տակտիկական հայացքները, ճշմարտացիորեն բնութագրում քաղաքական կուսակցություններին, այլև ամենօրյա պայքար մղում բոլշևիկյան գծի համար, ծավալում պրակտիկ գործունեություն։ Նա լայն աշխատանք էր տանում բանվորական պրոֆմիություններում, գործազուրկների բյուրոյում, կազմակերպում հեղափոխական ելույթներ։

Սպանդարյանը սերտորեն կապված էր Հայաստանի հետ և ամեն կերպ օգնում էր տեղական բոլշևիկներին։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ նա 1906 թ. օգոստոսին գալիս է Ալավերդի և Ստ. Շահումյանի հետ միասին գլխավորում պղնձահանքերի բանվորների մասսայական գործադուլը։ Հանքատերերը հարկադրված էին նահանջել և զիջումներ կատարել, բայց վերջիվերջո նրանց օգնության եկան կառավարական զորքերը և հաշվեհարդար տեսան գործադուլավորների հետ։ Մեկ ամիս տևող գործադուլը ճնշվեց, բայց և ցնցեց տիրողներին։ Ամփոփելով գործադուլի արդյունքները, Շահումյանը և Սպանդարյանը նշել են, որ հետագա հաջողության համար բանվորներին պետք է ավելի շատ գիտակցություն ու կազմակերպվածություն։

Սպանդարյանը շրջագայում է Հայաստանի մի շարք վայրեր և գրում «Մեր դերը գյուղերում» հոդվածաշարը, որտեղ լայնորեն քննարկում է ագրարային հարցը և այն մասնավորեցնում հայ իրականության վերաբերյալ։ Նա գրում է. «Որքան մենք կարողացանք ծանոթանալ հայկական գյուղի և նրա դրության հետ, մենք եկանք այն եզրակացության և հաստատ համոզման, որ ագրարային շարժման համար հարուստ հող կա և իսկապես հեղափոխական, և իսկապես սոցիալիստ կուսակցությունը շատ գործ է կատարել այնտեղ»[10]։

Հայ իրականության համար որոշակի նորություն էր Սպանդարյանի «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարը, որը լույս տեսավ «Նոր խոսքում» 1906 թ. օգոստոսին։ Այդտեղ առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվում են բոլշևիկյան հայացքները կրթության ու մշակույթի մասին։ Այդ կարևոր պրոբլեմը քննարկվում է կապված ամբողջ հասարակության արմատական վերակառուցման հետ։ Մասնատիպական հասարակարգերում կրթության ու դաստիարակության գործը կրում է դասակարգային բնույթ։ Շահագործողներն այն ի սպաս են դնում իրենց տիրապետության ամրապնդմանը, «կրթում ու դաստիարակում» հավատարիմ ծառաների, հոգևոր սպասավորների։ Իր խոսքը կոնկրետացնելով կապիտալիզմի վերաբերյալ, Սպանդարյանը նշում է, որ «բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառնում է ապրանք, ծախու և առնելու առարկա և այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլև մտավոր, ոչ նյութական բաները, գիտություն, տաղանդ, շնորհք և այլն»[11]։ Կոմունիստները գտնում են, որ ժողովրդի կրթության գործը պետք է դրվի ամուր հիմքերի վրա։ Դրա նախա-

9 Ս. Սպանդարյան. Երկեր. հ. 1, էջ 53։

10 Նույն տեղում, էջ 129։

11 Նույն տեղում, էջ 118։

պայմանը շահագործողական կարգերի տապալումն է, իսկական ժողովրդապետության հաստատումը։ Սպանդարյանը գիտական վերլուծությամբ ցույց է տալիս, որ «տնտեսական զարգացումը, կապիտալիստական արտադրությունն անխուսափելիորեն տանում են ժամանակակից հասարակությունը դեպի սոցիալիզմ»[12]։

1906 թ. նոյեմբերին Սպանդարյանը մեկնում է Գանձակ (Ելիզավետպոլ) և աշխուժացնում այնտեղի կուսակցական կազմակերպության աշխատանքները։ Գումարվում է քաղաքային կոնֆերանս, որտեղ Սպանդարյանը զեկուցում է ընթացիկ մոմենտի ու կուսակցության խնդիրների մասին։ Տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն և ապա ընդունվում բոլշևիկյան բանաձև։ Հանձնարարվում է բոլոր կոմունիստներին՝ եռանդուն աշխատանք տանել բանվորների ու երկաթուղայինների մեջ, կազմակերպել հեղափոխական ելույթներ և վճռական հակահարված տալ մենշևիկներին ու նացիոնալիստներին։ Ս. Սպանդարյանի, Ա. Մռավյանի, Ս. Հովսեփյանի և ուրիշների ջանքերով գործի է դրվում անլեգալ տպարանը, հրատարակվում են թռուցիկներ, ստեղծվում է բանվորական գրադարան։

Այնուհետև Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավար կենտրոնը նպատակահարմար գտավ, որ Սպանդարյանը մշտական աշխատանքի մեկնի պրոլետարական Բաքու, ուր կուսակցական-հեղափոխական գործունեության ավելի լայն ասպարեզ կար։ Դրան նպաստեց նաև այն, որ անհրաժեշտ էր կազմակերպել հայերեն բոլշևիկյան նոր թերթի հրատարակություն հենց այնտեղ։ Այդպես Սպանդարյանը 1907 թ. հունվարին տեղափոխվում է բոլշևիզմի կովկասյան միջնաբերդը, ուր և նրա ղեկավար մասնակցությամբ լույս տեսավ «Օրեր» թերթը։

Այդպիսով, 1905—07 թթ. Ս. Սպանդարյանը հանդես է գալիս որպես պրոֆեսիոնալ հեղափոխական, Անդրկովկասի կուսակցական խոշոր գործիչ, փայլուն ժուռնալիստ ու հրապարակախոս, որն անդուլ պայքար է մղում լենինյան գծի համար։

* * *

Ռուսաստանում առաջին դեմոկրատական հեղափոխությանը հաջորդեց ստոլիպինյան դաժան ռեակցիան։ 1907 թ. հունիսերեքյան պետական հեղաշրջումով ցարիզմը կատաղի հարձակման անցավ աշխատավոր մասսաների, դեմոկրատական, առաջադիմական ուժերի դեմ։ Շատերը չդիմացան ռեակցիային։ Այդպիսի ծանր իրադրության մեջ միայն կայուն բոլշևիկներն էին, որ մընացին անսասան, հավատարիմ իրենց հեղափոխական աշխարհայացքին ու ծրագրային պահանջներին։ Վ. Ի. Լենինը նշեց նրանց անելիքներն ու պայքարի մեթոդները նոր պայմաններում։ Անփոփոխ էր մնում կուսակցության քաղաքական ստրատեգիան՝ ցարիզմի տապալման խնդիրը, բայց փոխվում էր նրա գործելակերպը։ Հարկավոր էր կատարել կանոնավոր նահանջ և հմտորեն կիրառել անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցման տակտիկան։

Վ. Ի. Լենինը խնդիր դրեց ամրապնդել բոլշևիկների դիրքերը Բաքվում՝ համառուսաստանյան մասշտաբի արդյունաբերական խոշոր կենտրոնում։ Այդտեղ էին աշխատում Ստ. Շահումյանը, Գ. Օրջոնիկիձեն, Ի. Ստալինը, Ս. Սպանդարյանը, Պ. Ջափարիձեն, Ա. Ենուկիձեն, Մ. Ազիզբեկովը, Վ. Կասպարովը, Դ. Ֆիոլետովը, Ալ. Մյասնիկյանը, Մ. Մամեդյարովը, Բ. Սարգարովը և ուրիշներ։ Վերհիշելով այդ ժամանակները, Գ. Օրջոնիկիձեն գրել է. «Դա բոլշևիկների փոթորկի ու գրոհի շրջանն էր Բաքվում։ Մեր ֆրակցիան որոշեց բոլոր ուժերն ուղղել Բաքու, որպեսզի մենշևիկներին դուրս մղի Անդրկովկասի պրոլետարական կենտրոնից»[13]։

Բոլշևիկները համախմբեցին իրենց ուժերը, ստեղծեցին գործնական կենտրոն և միաժամանակ կատարեցին աշխատանքի բաժանում՝ ըստ Բաքվի

---

12 Նույն տեղում, էջ 120։

13 «Бакинский рабочий», 28 апреля 1924.

շրջանների։ Սպանդարյանը քաղաքի բոլշևիկյան դեկավար գործիչներից էր։ Դրա հետ միասին նա լայն աշխատանք ծավալեց հատկապես Սև-քաղաքում, որպես նրա կուսակցական կազմակերպիչ։ Սպանդարյանը հեղափոխական աշխատանք էր տանում քաղաքի նաև Զավոկզալնոյի շրջանում։

Գնալով աճում էր Բաքվի բոլշևիկների ազդեցությունը և նրանց եռանդուն ջանքերով 1907 թ. հունիսի 20-ից հրատարակվում է «Բակինսկի պրոլետարի» անլեգալ թերթը, որի խմբագրության մեջ էին Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Ս. Սպանդարյանը, Պ. Ջափարիձեն։ Նոր ուժով է ծավալվում Տիմոֆեյի ժուռնալիստական տաղանդը։ Մեկը մյուսի ետևից «Տ» ավանդական ստորագրությամբ լույս են սեսնում նրա մարտական հոդվածները, մասնավորապես «Քաղաքական ակնարկների» շարքը՝ նվիրված ժամանակի կարևոր իրադարձություններին։

Սպանդարյանն ակտիվորեն մասնակցեց III Պետական դումայի ընտրությունների բոլշևիկյան կամպանիային, որը լայն ծավալ ընդունեց Բաքվում։ Նա ունեցավ մի շարք ելույթներ, որոնց մեջ մերկացնում էր տիրող կարգերը և պրոպագանդում ՌՍԴԲԿ մինիմում-ծրագրի պահանջները։ Ցարական նոր դուման ոչ մի լավ բան չէր խոստանում աշխատավոր մարդուն, բայց կարելի էր օգտագործել այն հեղափոխական աշխատանքի համար։

Ամրապնդելով իրենց դիրքերը, բոլշևիկները 1907 թ. հոկտեմբերին անլեգալ ձևով հրավիրեցին համաքաղաքային կոնֆերանս, որն ընտրեց ՌՍԴԲԿ Բաքվի բոլշևիկյան կոմիտե. նրա մեջ մտան Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը, Ի. Ֆիոլետովը և ուրիշներ։ Դրանով կազմակերպչորեն ավարտվեց բոլշևիկների հաղթանակը մենշևիկների դեմ։ Սպանդարյանը մենշևիզմի դեմ մղվող պայքարի կենտրոնական դեմքերից էր։ Նա կուսակցական ժողովներում ու բանվորական հավաքներում, ինչպես նաև մամուլում, ամենայն անողոքությամբ խարազանում էր նրանց՝ ստանալով «խայթիչ» անունը։

Սպանդարյանը մեծ դեր էր կատարում Բաքվի պրոլետարիատի արհմիութենական շարժման մեջ։ Բոլշևիկների նախաձեռնությամբ ու դեկավարությամբ գործում էր նավթարդյունաբերական բանվորների պրոֆմիությունը, որը կազմված էր ինտերնացիոնալ սկզբունքով։ Այդ միության օրգանն էր «Գուդոկ» թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1907 թ. օգոստոսի 12-ին։ Այն բոլշևիկյան էր և նրան աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը, Ա. Ստեպանին և ուրիշներ։ Սպանդարյանը «Ս. Ս.-յան» ստորագրությամբ գրեց մի շարք հոդվածներ («Զարանենգ անդորություն», «Հալիդ ընկած միության վերածնունդը», «Մազութի տրուբադուրը», «Կուլտուր-լուսավորական աշխատանքը» և այլն), որոնց մեջ քննարկում էր Բաքվի պրոլետարիատի արհմիութենական շարժման կենսական հարցերը։

Առաջնակարգ նշանակություն ուներ նավթաշխարհի բազմազգ բանվորության միասնության ստեղծումը, որը պետք է իրականացվեր նաև ընդհանուր արհմիության կազմակերպմամբ. «Նավթարդյունաբերական պրոլետարիատն ավելի և ավելի է յուրացնում այն գաղափարը, թե անհրաժեշտ է սընտեսական միասնական մի կազմակերպություն՝ կապիտալի դեմ հաջողությամբ պայքարելու համար։ Այդպիսի կազմակերպության անհրաժեշտությունն այստեղ առանձնապես զգացվում է նաև այն պատճառով, որ հազիվ թե մի այլ տեղ լինի ազգությունների այնպիսի բազմաղանություն, ինչպես մեզ մոտ, նավթային աշխարհում։ Ահա թե ինչու Բաքվի բանվորների կենսական շահերը թելադրում են ունենալ մի կազմակերպություն, որը տնտեսական պայքարում համախմբի մաղութային այս ամբողջ բանակը՝ առանց ազգային խտրության, առանց քաղաքական հավատո հանգանակի տարբերության։ Հենց այդպիսի կազմակերպություն է հանդիսանում ահա նավթարդյունաբերական բանվորների միությունը»[14]։

---

[14] Ս. Սպանդարյան. Երկեր. հ. 1, էջ 155։

Բաքվի բանվորական շարժման մեջ կարևոր իրադարձություն էր 1907—1908 թթ. «խորհրդակցական կամպանիան»։ Ահաբեկված հեղափոխական շարժումից, Բաքվի նավթարդյունաբերողները 1907 թ. ամռանն առաջարկեցին բանվորների հետ խորհրդակցություն զումարել և կնքել կոլեկտիվ պայմանագիր։ Մենշևիկներն անմիջապես հավանություն տվին այդ առաջարկին և պահանջեցին մասնակցել խորհրդակցությանը, իսկ էսէռներն ու դաշնակցականները բռնեցին բոյկոտի ուղին։

Ճիշտ դիրք գրավեցին միայն բոլշևիկները և մշակեցին ճկուն տակտիկա։ Սկզբում նրանք դեմ էին խորհրդակցությանը, քանի որ 1907 թ. ամռանը նախապատրաստվում էր բանվորների ընդհանուր գործադուլ, իսկ տարվա վերջին, երբ դրությունը փոխվել էր, վրա հասել ձմեռը, փակվել նավագնացությունն ու դադարեցվել նավթի արտահանումը, որը կապիտալիստներին դիմադրության ժամանակ ու հնարավորություն էր տալիս, առաջարկեցին նոր տակտիկա՝ «խորհրդակցություն երաշխիքներով կամ ոչ խորհրդակցություն»։ Բաքվի բոլշևիկյան կոմիտեն Սպանդարյանի մասնակցությամբ մշակեց բանվորական հինգ երաշխիքներ. 1) «խորհրդակցության» ժամանակը պետք է որոշվի բանվորների համաձայնությամբ, 2) նրանք պետք է ունենան խոսքի ու ժողովների ազատություն և մշակեն իրենց պահանջները, որոնք կդրվեն կոլեկտիվ պայմանագրի հիմքում, 3) ամբողջ ժամանակ պետք է գործի բանվորների լիազորների խորհուրդը, ընդ որում ամեն մի լիազոր պետք է հաշվետու լինի իր ընտրողների առաջ, 4) արհմիությունները պետք է դեկավարեն ընտրությունները և ունենան իրենց ներկայացուցիչները լիազորների խորհրդում ու «խորհրդակցությանը», 5) պետք է կնքվի մեկ ընդհանուր կոլեկտիվ պայմանագիր բոլոր բանվորների համար։ Բանվորների հիմնական մասսան պաշտպանեց բոլշևիկների տակտիկան և լիազորների ընտրության ժամանակ մեծ մասամբ ընտրվեցին նրանց ներկայացուցիչներն ու կողմնակիցները։

Սպանդարյանը գտնվում էր դեպքերի հորձանուտում, հաճախակի ելույթներ ունենում բանվորների առաջ, հանդես գալիս մամուլում, անմիջականորեն մասնակցում «խորհրդակցական կամպանիային»։ Բոլշևիկների դեկավարությամբ այն վերածվեց պրոլետարիատի քաղաքական դաստիարակության ու կազմակերպման դենքի, տիրող կարգերի, բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների մերկացման միջոցի։

Բաքվի բոլշևիկները վիթխարի ջանքեր գործադրեցին, որպեսզի հրատարակեն նոր թերթ։ Այդպիսին դարձավ «Բակինսկի ռաբոչին», որը լույս տեսավ 1908 թ. սեպտեմբերին։ Նրա խմբագրության մեջ մտնում էին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Դ. Ջափարիձեն, Վ. Եֆիմովը (Սարատովից), Ստ. Յակուշևը և ուրիշներ։ Սպանդարյանը պարբերաբար հոդվածներ էր գրում («Ս. Օլգին», «Տ» ստորագրություններով) ժամանակի հրատապ հարցերի մասին և ամեն կերպ ոգեշնչում բանվորներին՝ նրանց հեղափոխական պայքարում։ 1908-ի հոկտեմբերի 31-ին «Բակինսկի ռաբոչին» փակվում է, բայց արդեն 1909 թ. փետրվարին հրատարակվում է «Վոլնա» լեգալ ժուռնալը՝ Ստ. Շահումյանի խմբագրությամբ։ Նորից նրա հետ է Ս. Սպանդարյանը։

Ուժեղանում է ոստիկանական հսկողությունը Սպանդարյանի վրա, որը Բաքվի պահնորդական բաժանմունքում կնքվում է նոր անունով՝ «Կավկազսկի»։ Ցարական լրտեսներն ու գործակալները տառացիորեն հետևում էին նրա ամեն մի քայլափոխին։ Բայց Սպանդարյանը գործում էր մեծ զգուշությամբ և «հանցանշաններ» չէր պահում։ Ոստիկանները որոշակի առաջադրանքով օգոստոսի 28-ին պարզապես հարձակվեցին հաշմանդամ բանվորների բյուրոյի գրասենյակի վրա, ամեն ինչ տակնուվրա արին, բայց «կասկածելի» ոչինչ չգտան։ Սակայն դա չխանգարեց, որ նրանք ձերբակալեն այնտեղ աշխատող Սպանդարյանին։ Նորից Բաքվի բանտ։ Այդ տանջարանում երեք ամիս սառապեց Սպանդարյանը, մինչև որ ժանդարմերիան «հանցանշաններ» հավաքեց և մասնավորապես նշեց. «Սպանդարյանը հսկողության տակ էր առնված ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության գործով և կային գործակալների ցուցումներն այն մասին, որ նա պատկանում է հիշյալ կազմակերպության Բաքվի կո-

միտեին, որտեղ նա հայտնի է «Տիմոֆեյ» մականունով։ Կազմակերպության մեջ նա պրոֆեսիոնալ էր և աչքի էր ընկնում որպես լավ հռետոր։ Ըստ Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի 1909 թ. սեպտեմբերի 16-ի № 19393 հաղորդագրության՝ Սպանդարյանը, գործակալների տեղեկությունների համաձայն, որոնք վերաբերում են 1906 և 1907 թթ., եղել է սոցիալ-դեմոկրատական ակտիվ գործիչ, ընդ որում մշտապես գտնվել է Բաքու քաղաքում՝ կամ Ելիզավետպոլ քաղաքում և նույնիսկ վերջինից ընտրվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության արտասահմանում գումարվող համագումարի պատգամավոր»[15]։

Այդ ամենի հիման վրա Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետը 1909 թ. դեկտեմբերի 22-ին որոշում է Սպանդարյանին արտաքսել իրեն ենթակա քաղաքապետության սահմաններից։ Նա թույլտվություն է ստանում ապրել Դերբենտում, բայց այդտեղ մնում է շատ կարճ և արդեն 1910 թ. հունվարին հայտնվում է Թիֆլիսում, ուր վարում է անլեգալ կյանք։

Սպանդարյանը ընտրվում է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի կազմում, որտեղ աշխատում էին Պ. Ջափարիձեն, Ե. Ստասովան, Ս. Կասյանը, Հ. Հակոբյանը, Պ. Արվելաձեն, Մ. Թավդիաշվիլին և ուրիշներ։ Նա աջակցում է «Թիֆլիսի պրոլետարի» անլեգալ բոլշևիկյան թերթի հրատարակությանը (լույս է տեսել 1910 թ. հունվարից մարտ), անհաշտ պայքար մղում մենշևիկ-լիկվիդատորների, օտզովիստների, տրոցկիստների, հաշտվողականների դեմ։

Ռեակցիայի տարիներին Սպանդարյանը վճռական պայքար մղեց նաև մարքսիզմի ռևիզիայի դեմ, մախիստների, էմպիրիոկրիտիկների դեմ, որոնք դիալեկտիկական մատերիալիզմին հակադրում են սուբյեկտիվ իդեալիզմը, կրոնական միստիկան։ Բաքվում, Թիֆլիսում և այլուր նա հետևողականորեն պաշտպանում էր մարքսիստական փիլիսոփայությունը, տեսական խորը պատրաստականությամբ ու գիտական հիմնավորվածությամբ մերկացնում իդեալիստներին, «մախիստներին», «աստվածաշինարարներին» ու «աստվածորոնողներին», որոնք սերմանում էին խավարամտություն, «միստիկական մըշուշի աֆիոն»։ Ս. Սպանդարյանի սիրած գրքերից էր Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը, որը նա խորապես ուսումնասիրեց և պրոպագանդեց ամենայն ուժով։ Նա ուզում էր կազմակերպել այդ հանճարեղ երկի վերահրատարակությունը Թիֆլիսում[16]։

Թիֆլիսում աշխատելով «ծպտված» կերպով, Սպանդարյանը օգտագործեց նաև լեգալ հնարավորությունները, այդ թվում «Նովայա ռեչ» թերթում հոդվածներ տպագրելով («Տ», «Իդգոյ», «Ս. Օլգին», «Ս. Օ.» ստորագրություններով)։ Ավելի ուշ՝ 1910-ի օգոստոսին նա իր ձեռքն է վերցնում Թիֆլիսում լույս տեսնող կոպեկանոց օրաթերթը՝ «Կուրյեր-կոպեյկա» անունով։ Մանր լուրերի լրագիրն այժմ ստանում է մարտական-քննադատական ոգի։ Դա առաջ է բերում ցարական իշխանության դժգոհությունն ու հետապնդումը և Սպանդարյանը՝ իր համախոհներով դեկտեմբերից հրատարակում է «Լիստոկ-կոպեյկա» օրաթերթը։ Դրան էլ 1911 թ. ապրիլին փոխարինում է «Տրուդովայա կոպեյկան»։ Այդ թերթում Սպանդարյանը հրապարակում է բազմաքանակ հոդվածներ՝ ամենատարբեր հարցերի (քաղաքային ինքնավարության, հանցագործությունների, քաղաքական կուսակցությունների ու հոսանքների, տնտեսական ու կուլտուրական խնդիրների) մասին և բոլորի կիզակետը դարձնում սիրող կարգերի մերկացումը ու աշխատավորների հեղափոխական համախմբումը, նրանց պայքարի կազմակերպումը։ Դա կատարվում է մարքսիստ ժուռնալիստի ու հրապարակախոսի հմտությամբ, հաճախ եզոպոսյան լեզվով, բազմազան ձևերի օգտագործմամբ։ Սպանդարյանն աշխատակցել է նաև բոլշևիկյան «Զվեզդային» («Յունիուս» ստորագրությամբ) և մերկացրել կադետներին, մենշևիկ-լիկվիդատորներին ու նրանց կովկասյան համախոհներին։

---

[15] ЦГИА Грузинской ССР. ф. 2, д. 1015, р. 149.

[16] ՄԼԻ ՀՄԿԱ. ֆ. 4006, ց. 1, գ. 980, թ. 1—2։

Սպանդարյանի ժուռնալիստական-հրապարակախոսական բեղմնավոր գործունեության մեջ կարևոր տեղ են բռնում գրականության ու արվեստի հարցերը։ Նա վաղ շրջանից համակվեց այդ բնագավառներով և ապա դարձավ դրանց խոր գիտակն ու մարքսիստ պրոպագանդիստը։ Իր գիտակցական կյանքի բոլոր շրջաններում և մասնավորապես ռեակցիայի տարիներին նա մեծագույն հմտությամբ օգտագործեց գրականության ու արվեստի երկերը, գրողների ու արվեստագետների ստեղծած կերպարները՝ հեղափոխական գործունեության ծավալման համար։

Սպանդարյանը գրել է բազմաթիվ հոդվածներ համաշխարհային, ռուսական ու հայ դրականության տարբեր հարցերի մասին, ինչպես նաև թատերական շատ գրախոսականներ, որոնց մեջ հետևողականորեն անց է կացրել դասակարգային-կուսակցական սկզբունքը, գրողներին ու արվեստագետներին արժեքավորել ըստ նրանց ստեղծագործությունների սոցիալական բովանդակության ու գեղարվեստական կատարման։ Նա բարձր է գնահատել հեղափոխական դեմոկրատներին (Գերցեն, Բելինսկի, Չեռնիշևսկի, Դոբրոլյուբով, Շևչենկո և ուրիշներ), Ա. Պուշկինին, Ն. Կռիլովին, Լ. Տոլստոյին, Ա. Չեխովին, Մ. Գորկուն, Հ. Հակոբյանին, Ա. Շիրվանզադեին և ուրիշների։ Սպանդարյանը բացառիկ սեր ու հոգատարություն ցուցաբերեց պրոլետարական գրականության ստեղծման ու զարգացման նկատմամբ։ Նա Ստ. Շահումյանի ու Ա. Մյասնիկյանի հետ միասին դրեց հայ մարքսիստական գրականագիտության ու գեղագիտության հիմքերը։

* * *

Ռեակցիայի տիրապետությունը կարճատև եղավ և Ռուսաստանի պրոլետարիատը նրանից դուրս եկավ հեղափոխական մարտերով։ Արդեն 1910 թ. սկսվեց հեղափոխական շարժման աշխուժացումը, որն այնուհետև վերածվեց վերելքի։ Ճիշտ է, այն ուշացումով ընդգրկեց Անդրկովկասը, բայց և այնպես երկրամասի բոլշևիկները համառուսաստանյան նոր իրադրության մեջ ավելի ակտիվացրին իրենց գործունեությունը։ Թիֆլիսի բոլշևիկները եռանդուն ջանքեր գործադրեցին ամրապնդելու կուսակցական կազմակերպությունը և շուտով ձևավորվեց նրա ղեկավար խումբը, որի մեջ են մտնում Ս. Սպանդարյանը, Ե. Ստասովան, Ս. Կասյանը, Դ. Շահվերդյանը, Պ. Արվելաձեն, Ռ. Քաթանյանը, Օ. Դաբունիան, Վ. Ջնելաձեն, Մ. Կվարցխելիան և ուրիշներ։

Սպանդարյանը ղեկավար դեր էր կատարում Թիֆլիսի կազմակերպության մեջ և անմիջականորեն գլխավորում տեղական բոլշևիկների գործունեությունը։ Հիշելով այդ ժամանակները, Ե. Դ. Ստասովան գրել է. «Ընկ. Սպանդարյանը մեր գաղտնի գործունեության ամենախոշոր աշխատողներից մեկն էր և իր ջերմ հոգով ու բուռն եռանդով ստիպում էր իր հետ բոլոր շփվողներին, որպեսզի նրանք իրենց ամբողջովին նվիրաբերեն բանվորական գործի համար»[17]։

1911-ի սեպտեմբեր-հոկտեմբերին Սպանդարյանը մասնակցում է բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությանը (Բաքվում ու Թիֆլիսում), ուր քննարկվում էր համակուսակցական կոնֆերանս հրավիրելու լենինյան առաջադրանքը։ Նա լիովին պաշտպանեց այն և զեկուցեց Թիֆլիսի կազմակերպության գործունեության մասին։ Կոնֆերանսի նախապատրաստման համար ստեղծվեց Համառուսաստանյան կազմակերպական հանձնաժողով (ՌԿՀ), որի մեջ մտան Գ. Օրջոնիկիձեն, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ի. Շվարցը և Յու. Սոկոլինը։ Սպանդարյանը գրեց ՌԿՀ-ի Ծանուցումը ՌՍԴԲԿ կոնֆերանսի հրավիրման անհրաժեշտության մասին, որը հրատարակվեց առանձին թերթիկով և առաքվեց կուսակցական կազմակերպություններին։ Նա կոնֆերանսի հրավիրման նախապատրաստման համար ծավալեց եռանդուն աշխատանք, եղավ Մոսկվայում, Պետերբուրգում ու Մերձբալթյան երկրամասում։

---

17 Սուրեն Սպանդարյան (Հոդվածների ժողովածու). Երևան, 1927, էջ 69։

Որպես Բաքվի կազմակերպության պատգամավոր Ս. Սպանդարյանը 1912-ի հունվարին մասնակցեց ՌՍԴԲԿ(բ) VI (Պրագայի) կոնֆերանսին, ուր առաջին անգամ հանդիպեց կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինին և արժանացավ նրա բարձր գնահատականին։ Այնուհետև նրանց միջև հաստատվեց սերտ կապ ու ջերմ բարեկամություն։ Սպանդարյանը կոնֆերանսում ղեկուցեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին և մերկացրեց մենշևիկների, նրանց Մարզային կոմիտեի օպորտունիզմն ու պառակտիչ գիծը։ Նա ակտիվորեն մասնակցեց կոնֆերանսի ողջ աշխատանքին, որը համակված էր լենինյան ոգով։ Կոնֆերանսը ունեցավ համագումարի նշանակություն և կուսակցությունը մաքրեց մենշևիկ-լիկվիդատորներից ու այլ օպորտունիստներից։ Ընտրվեց ՌՍԴԲԿ(բ) Կենտկոմ՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Սպանդարյանն ընտրվեց Կենտկոմի ու նրա Ռուսական բյուրոյի անդամ։ Նա իրեն դրսևորեց որպես Համառուսաստանյան մասշտաբի բոլշևիկյան գործիչ։

Կոնֆերանսից հետո Լենինի հետ միասին Սպանդարյանը մեկնում է Գերմանիա՝ կուսակցական կարևոր հանձնարարություններով։ Լայպցիգում մասնակցում է ՌՍԴԲԿ(բ) Կենտկոմի անդամների ու III Պետական դումայի սոց.-դեմ. ֆրակցիայի ներկայացուցիչների խորհրդակցությանը, ուր Լենինը ղեկուցում է Պրագայի կոնֆերանսի արդյունքների, իսկ ինքը՝ ՌԿՀ-ի գործունեության մասին։ Բեռլինում ՌՍԴԲԿ(բ) ներկայացուցչության կազմում բանակցություններ է վարում Կ. Կաուցկու հետ՝ բոլշևիկներին պատկանող գումարները «պահողներից» ետ ստանալու համար։ Այդտեղ նա Լենինին ծանոթացրեց իրենց ընտանիքին մտերիմ Ոսկի Տեր-Հովհաննիսյանի հետ, որն «ամեն տեսակ ծառայություններ մատուցեց կուսակցությանը»[18]։

1912-ի փետրվարին Սպանդարյանը մեկնում է Փարիզ, ուր գտնվում էր նրա հայրը՝ Սպանդար Սպանդարյանը, որը շահել էր միջկուսակցական դատը՝ մերկացնելով դաշնակցականների հերյուրանքը իր հասցեին՝ իբր ցարական լրտեսի։ Սպանդարյանը գոհ էր այդպիսի դատավճռից, բայց գտնում էր, որ պետք է դատ բացել դաշնակցական զրպարտիչների դեմ։ Այնուհետև նա վերադառնում է Ռուսաստան և Պրագայի կոնֆերանսի արդյունքների մասին դեկուցումներ կարդում Լատիշական երկրամասում, Պետերբուրգում, Մոսկվայում ու Անդրկովկասում։ Նրա ղեկավարությամբ ընդունվում են բոլշևիկյան բանաձևեր, որտեղ լիովին հավանություն է տրվում լենինյան գծի հաղթանակին։ Ամենուրեք նա աջակցում է կուսակցական աշխատանքի աշխուժացմանը, ակտիվորեն մասնակցում IV Պետական դումայի բոլշևիկյան նախընտրական կամպանիային, Թիֆլիսում կազմակերպում ընդհատակյա տպարան, հրատարակում հեղափոխական թռուցիկներ։

Ցարական իշխանություններն ուժեղացնում են հետապնդումները և 1912-ի մարտի 18-ին Սպանդարյանին ձերբակալում Բաքվում։ Թեև նա շուտով ազատվում է ու մեկնում Թիֆլիս, բայց մայիսի 22-ին նորից է ձերբակալվում Բաքվում, երբ գնացքով Թիֆլիսից մեկնում էր Եկատերինոդար (Կրասնոդար)։ Դա նրա հինգերորդ ձերբակալությունն էր և այս անգամ նա այլևս չի ազատվում։ Ժանդարմական գրագրություններում նա բնութագրվում է որպես «թունդ լենինյան»[19] և նետվում Թիֆլիսի Մետեխի բանտը։ Ո՛չ բանտային դաժան պայմանները և ո՛չ էլ ոստիկանական կամայականությունները չէին կարող ընկճել աննկուն հեղափոխականին։ Սպանդարյանը թե՛ երկարատև նախաքննության ժամանակ և թե՛ դատարանում (1913-ի մայիսի 2—4-ը) ցուցաբերեց կոմունիստին վայել հաստատակամություն ու մարդկային արժանապատվություն, միաժամանակ հմտությամբ հերքելով իր և ընկերների դեմ հարուցված մեղադրանքները։ Այնուամենայնիվ, Թիֆլիսի դատաստանական պալատի հատուկ ատյանը նրան՝ Ե. Ստասովայի, Վ. Ծվեյցերի, Վ. Խա-

---

18 Ն. Կ. Կրուպսկայա. Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին. Երևան, 1977, էջ 243։

19 Большевики. Документы по истории большевизма с 1903 по 1916 г. бывшего Московского охранного отделения. М., 1918, с. 88.

չատրյանի և ուրիշների հետ դատապարտում է ցմահ աքսորի Սիբիրում։ Սպանդարյանը հրաժարվեց վճռաբեկ գանգատ տալուց, իսկ ընտանիքին գրեց. «Ամեն տեղ մարդիկ են ապրում, և Սիբիրում էլ ես կապրեմ ոչ ավելի վատ, քան այստեղ»[20]։

1913-ի սեպտեմբերի 16-ին Սպանդարյանին շղթայակապ ու էտապով աքսորում են Սիբիր։ Խիստ տանջալից էր նրա ուղին, մանավանդ որ առողջությունն էլ արդեն խախտվել էր։ Բայց և այնպես կնոջը՝ Օ. Վ. Սպանդարյանին ճանապարհից լավատեսորեն գրեց. «Ես լավ և առույգ եմ զգում հոգեպես ու մարմնապես»[21]։ Սպանդարյանին սկզբում տեղավորում են Ենիսեյսկի նահանգի Կանսկի գավառի Պերովսկ ոլոստի Իննոկենտևկայա գյուղում, որը Սիբիրի առավել խուլ անկյուններից էր։ Չնայած դրան, նա ծանոթանում է տեղաբնակներին, հմտորեն կապվում աքսորյալ սոցիալ-դեմոկրատների հետ և կազմակերպում խորհրդակցություններ ու մայովկա, հիմնում է փոքրիկ դրադարան, ապահովում բոլշևիկյան «Պրավդա» լեգալ թերթի բաժանորդագրությունը, ձեռնարկում աշխատություն ազգային հարցի մասին, պաշտպանում ազգերի ինքնորոշման իրավունքն ու մերկացնում կուլտուր-ազգային ավտոնոմիայի քարոզը։

Նա հաղորդակցվում է Անդրկովկասի ու Պետերբուրգի բոլշևիկների հետ և ամենակարևորը՝ նամակագրական կապի մեջ մտնում Վ. Ի. Լենինի հետ։ 1914-ի մարտի 15-ին նրան գրած նամակում գալիքի մասին նշում է. «Ես ալնուամենայնիվ հաստատապես հուսով եմ, որ «օրը» հեռու չէ և որ մենք դեռ կպատրաստվենք գործի համար... Չէ որ եթե իսկական կյանք չկա, պետք է հնարել այն. ահա մենք էլ ապրում ենք ռուսաստանյան պայքարի արձագանքներով և այստեղ մինյատուր ձևով կրկնում ենք այն... Եթե Դուք մի քանի խոսք գրեք ինձ, շատ և շատ շնորհակալ կլինեմ»[22]։ Վ. Ի. Լենինը ջերմորեն արձագանքեց նրան. նա խիստ մտահոգված էր Սպանդարյանի ու մյուս աքսորյալ բոլշևիկ գործիչների վիճակով և ոչ միայն կազմակերպեց նյութական օգնություն, այլև նախատեսվում էր ստեղծել նրանց փախուստի հնարավորություն։

Ցարական իշխանությունները, ձեռք բերելով որոշ տվյալներ, խափանում են այդ և Ս. Սպանդարյանին 1914-ի մայիսին աքսորում ավելի հյուսիս՝ Տուրուխանյան երկրամասի Մոնոստիրսկոյե գյուղը։ Իսկ և իսկ սառցային գերեզմանոց, ուր Սպանդարյանի առողջությունը խստորեն վատթարանում է։ Սպրուստ հայթայթելու համար նա մի կերպ զբաղվում է փայտահատությամբ ու որսորդությամբ և նույնիսկ այդպիսի իրավիճակում իր ուշադրության կենտրոնում պահում քաղաքական-կազմակերպական աշխատանքը։ Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, նա կանգնեց միանգամայն ճիշտ դիրքերի վրա և պաշտպանեց ու պրոպագանդեց իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգը, մերկացրեց մենշևիկների սոցիալ-շովինիստական հայացքները, խարազանեց II Ինտերնացիոնալի պարագլուխներին, օպորտունիստներին։

Մոնաստիրսկոյեն, ուր տեղափոխվել էր նաև Յա. Մ. Սվերդլովը և Սպանդարյանի հետ գործում էր սերտ համերաշխությամբ, վերածվեց աքսորյալ բոլշևիկների կարևոր կենտրոնի։ Այնտեղ կազմակերպվում էին խորհրդակցություններ և քննարկվում ժամանակի կենսական հարցեր։ 1915-ի հուլիսին Մոնաստիրսկոյե ժամանեցին IV Պետական դումայի աքսորյալ բոլշևիկ-դեպուտատները, որոնց հետ միասին խորհրդակցություն կազմակերպվեց։ Այդտեղ հանդես եկավ Սպանդարյանը, որն ըստ արժանվույն գնահատեց բոլշևիկյան ֆրակցիայի գործունեությունը և մերկացրեց Կամենևի դավաճանությունը, նրա ելույթն անվանեց «լիբերալ փասստաբանի ճառ»։ Խորհրդակցությունն ընդունեց հեղափոխական բանաձև, որը գրել էին Յա. Սվերդլովն ու Ս. Սպան-

20 Ս. Սպանդարյան. Երկեր. հ. 2, էջ 294։

21 Նույն տեղում, էջ 303։

22 Նույն տեղում, էջ 274։

դարյանը։ Բանաձևը ձեռագիր ու տպագիր ձևով տարածվեց որպես կուսակցական կարևոր փաստաթուղթ պատերազմական ժամանակաշրջանի հանգուցային հարցերի վերաբերյալ։ Սպանդարյանը մի խումբ բոլշևիկների հետ միասին 1916-ի մայիսին ողջունում է «Վոպրոսի ստրախովանիա» բոլշևիկյան ժուռնալի հրատարակությունը, ինչպես նաև հավանություն տալիս Ցիմերվալդի ու Կինտալի միջազգային սոցիալիստական կոնֆերանսի որոշումներին։

1916-ի մայիսի 28-ին Սպանդարյանը գրում է իր վերջին նամակը Վ. Ի. Լենինին, ուր «ամենաբոցավառ ողջույն է հղում մեր սառն երկրներից» և շեշտում, որ «մենք հոգով արի ենք»[20]։ Բայց ֆիզիկապես արդեն սպառվել էր նա և դեռ 34 տարին չբոլորած դարձել «զառամյալ ծերունի» ու գամվել անկողնուն։ Ընկերների միջոցով հաջողվում է ծանր հիվանդ Սպանդարյանին բուժման նպատակով տեղափոխել սկզբում Ենիսեյսկ և ապա Կրասնոյարսկ, բայց արդեն ուշ էր. սեպտեմբերի 11 (24)-ին նա վախճանվում է քաղաքային հիվանդանոցում և թաղվում աքսորյալների գերեզմանոցում։

Կուսակցության կենտրոնական օրգանում, որը հրատարակվում էր Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, գրվեց հատուկ մահախոսական, որտեղ բարձր են գնահատվում Սպանդարյանի վիթխարի ծառայությունները և նշվում, որ նա մինչև վերջ «հավատարիմ է մնացել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի լավագույն ավանդույթներին, ոչ մի բոպե չտատանվելով ինտերնացիոնալիզմի դիրքերից»[24]։ Հետագայում էլ Վ. Ի. Լենինը շեշտել է, որ Սպանդարյանը «շատ արժեքավոր ու նշանավոր աշխատող էր, ականավոր հեղափոխական»[25]։ Ստ. Շահումյանը Սպանդարյանին բնութագրել է որպես կովկասյան ու համառուսաստանյան մասշտաբի հեղափոխական ու կուսակցական խոշոր գործիչ, որի հիշատակի առաջ պետք է խոնարհվել և շարունակել այն գործը, որի «համար նա ապրեց ու մեռավ»[26]։

Սպանդարյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, գրել բազմաքանակ հոդվածներ, հիմնականում հրապարակախոսական-ժուռնալիստական բնույթի, որոնք վերաբերում են մարքս-լենինյան տեսությանը, տիրող կարգերի մերկացմանը, հեղափոխական շարժումներին, մշակույթի, գրականության, արվեստի հարցերին։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական ժողովուրդը սրբությամբ են պահում Սուրեն Սպանդարյանի անմար հիշատակը, բարձր գնահատում նրա գործունեությունը։ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը Ս. Սպանդարյանին դասել է ականավոր հեղափոխականների շարքը[27]։ Նրա անունով են կոչվում Սովետական Միության բազմաթիվ վայրեր ու փողոցներ, տնտեսական օբյեկտներ և ուսումնական հաստատություններ։ Արժատապես փոխվել է նաև նախկին դժոխային Սիբիրը՝ վերածվելով բուռն զարգացող ու լուսավոր երկրամասի։ Այն տունը Ն. Տուրուխանսկում (Մոնաստիրսկոյե գյուղում), որտեղ ապրել է Սպանդարյանը աքսորի տարիներին, վեր է ածվել թանգարանի։ Պատին ամրացված հուշատախտակի վրա գրված է. «Այս տանը աքսորված ժամանակաշրջանում՝ 1914—1916 թթ. ապրել է բոլշևիկյան կուսակցության լավագույն կազմակերպիչներից մեկը՝ Սուրեն Սպանդարյանը»։ Տուն-թանգարանի բակում բարձրանում է աննկուն հեղափոխականի հոյակերտ արձանը, իսկ Կրասնոյարսկում մարմարե հուշարձան է դրված Սպանդարյանի գերեզմանին։

Երախտապարտ սերունդները միշտ էլ կհիշեն բոցաշունչ հեղափոխականին, որի կյանքը ոգեշնչող սխրանք էր։

---

23 Նույն տեղում, էջ 278։

24 «Социал-демократ». 1916, № 56.

25 В. И. Ленин. ПСС. т. 52, с. 272.

26 Ստ. Շահումյան. Երկ. հ. 3, էջ 61։

27 Տե՛ս Լ. Ի. Բրեժնև. Լենինյան կուրսով. հ. 3, էջ 458։